



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասուրյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ի՞նչ ՏՎԵՑ

ԲԱՅԼԵՎԵՎԻԿՅԱՆ  
ԳԱՐԱԱԱՑԱՆԸ

X

ՓԵՏԱԿԱՆ ՀՐԱԺԱՐԱԿՀՈՒԹՅՈՒՆ



Ո. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

631.512

Խ Ա ՏԵՇ ԲԱՅԼԵՎԻԿԻՑԱՆ  
ԳԱՐԵԱՆԱՑԱՆԸ

A Դ 4742

ՀԱՅԱՍՏԱՆԻ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1930





Հրատ. № 1394

Գրառեալ. № 5739(բ) Պատվել № 873 Տիրամ 5000

Պետհրատի լերկրությ տպարան Յերևանում

## ԲԱՅԼԵՎԻԿՅԱՆ ԳԱՐՆԱՊՅԱՆ

### ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԴԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Մեր կուսակցության 15-րդ համագումարում, յերբ  
քննության առնվից ժողովրդական տնտեսության ա-  
ռանձին ճյուղերի (արգունարերություն և գյուղա-  
անահատություն) զարգացման ուղիները, ավելի պար-  
զորոշ կերպով՝ կուսակցության առաջ կանոնեց մեր  
լիբերի գյուղանահատության հետամնացության, ար-  
գունարերության նկատմամբ ունեցած նրա զարգաց-  
ման անհամեմատ անբավարար տեմպերի խնդիրը։ Այդ  
համագումարում կուսակցությունն արձանագրեց, վոր  
գյուղանահատության նմանարինակ հետամնացությունը  
սպառնում և մեր լիբերի ինգուստարիալիզացիացին, վոր  
մեր լիբերի ինգուստարացման տեմպերը գեմ են առնում  
գյուղանահատության հետամնացությանը։

Վարդ եր լելքը։ Կուսակցությունն ինչպես պետք  
է գուրս բերեր մեր գյուղանահատությունը այդ զրու-  
թյունից։

Կուսակցությունն ուներ Լինինի՛ հայտնի ցուց-  
մունքը գյուղանահատության զարգացման ուղիների  
մասին։ Այդ ցուցմունքում առված է՝ «Յերե գյուղա-  
ցիական և նետարյանը կարող է ավելի զարգանալ, ան-  
համեմետ և նաև ավագութել երա հետազա ան-

ցումը, իսկ հետագա անցումն անխուսափելիորեն այն է, վոր ամենից քիչ ձեռնուու յել ամենից շատ հետամնաց, մանր, մեկուսացած զյուղացիական տնտեսությունն աստիճանաբար միավորվեր, կազմակերպվեր հասարակական խոռոր. հողագործական ընկերություն: Այսպես են պատկերացրել իւենց միջ բոլոր սոցիալիստները. Հենց այդպես ել նոյում ե մեր կոմմունիստական կուսակցությունը: Հենինիզմի այս հայտնի ցուցմունքից լեզելով, կուսակցության 15-րդ համագումարը վորոշեց՝ «Ներկա շրջանում զյուղացիական անհատական մանր տնտեսությունները միացնելու, խոշոր կոլլեկտիվներ կազմելու խնդիրը պետք է առաջադրվի վորպես կուսակցության հիմնական խնդիրը զյուղում»: Յեվ այնուհետև, կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևում՝ «Յելքն այն է, վոր պիտի ե զյուղացիական մանր յեզ մանրագույն տնտեսությունները, աստիճանաբար, սակայն անօւղղ կերպով, վոյ թե նեւմաք. այլ ցուցմունքներով ու համոզումներով միացնենք, դարձնենք խոռոր տնտեսություններ, իիմք ընդունելով նոդի հանրային, կոլլեկտիվ մօակումբ, գործադրելով զյուղատնտեսական մեթնասներ, տռակուններ, կիրառելով գիտական ձեւեր, հողագործության ինտենսիվացում: Յու յելք չկա»:

15-րդ համագումարի այս հայտնի դիբեկտիվների հիման վրա, կուսակցությունը ձեռնարկեց խոշոր, գիգանտ խորհրդային տնտեսությունների յեվ չքավորամիջակալին մատաների կամավոր միավորմամբ կոլլեկտիվ տնտեսությունների կազմակերպմանը:

Այս հարցը ավելի քան սուր կերպով զբվեց մեր առաջ հատկապես վերջին տարիներում, յերբ մենք կանգնեցինք հացահատիկալին պրոբլեմի, այդ դժվարին

հարցի լուծման առաջ: Հալտնի լե, վոր 15-րդ համագումարի և 16-րդ կուսկոնքերանսի միջև ընկած ժամանակաշրջանում մենք լուրջ դժվարությունների առաջ կանդնեցինք մեր լերկիրը հացով ապահովելու տեսակետից: Դրույատնտեսության ծալրաստիճան հետամնացությունը մի կողմից, զլուղի կուլակալին տարրերի ուժեղ դիմագրությունը և նրանց ուղակի սարուածք՝ պետությանը հաց հանձնելու տեսակետից մլուս կողմից, և սրբան ամելացրած բնական պատահարների հետեանքով հացարուկսերի ցանքսերի նվազումը 1927-28 տարում (այդ թվին փչացավ աշնանացան հացարուկսերի 20 տոկոսը) կուսակցության առաջ դնում էլին՝ առաջին՝ կուլակների վրա ժամանակավոր խիստ միջոցներ գործադրելու լեզանակով ստիպել նրան հանձնելու իր ավելցուկ հացը պետությանը և յերկրորդ՝ ամրող վճռականությամբ գնելու հացահատիկալին խորհրդալին և կոլլեկտիվ խոշոր տնտեսությունների կազմակերպման տեմպի արագացումը, վորպես հացահատիկի պրոբլեմի լուծման արմատական միջոցը:

Անհրաժեշտ և մատնանշել սակայն, վոր 15-րդ համագումարի առաջադրած մարտական լողունգը՝ «Գյուղ առաջ՝ դեպի կոլլեկտիվ տնտեսություննե», անմիջապես և միանդամից չեք կարող զլուղի հիմնական մասսաների, մասսայական շրջադարձ առաջ բերել զեղի սոցիալիզմը: Հարկավոր լեզավ այդ լողունգի առաջադրումից մոտ լերկու տարուց քիչ պակաս ժամանակաշրջան (մինչև 1929 թ. աշունը), վորպեսզի զլուղացիական մասսաները լուրացնելին այդ լողունգը, իրենք համոզվելին այդ լողունգի ճշտության մեջ և այն իրենց խիստական լողունգը համարելով, կիրառելին

կլանքում։ Իսկ այդ ժամանակաշրջանում կուսակցությունը հակայական և լայն աշխատանք ծավալեց մի կողմից այդ լոգունզը զյուղի հիմնական մասսաներում մարմանավորելու, միուս կողմից՝ այդ լոգունզի իրավործման մատերիալ տեխնիկական բազա ստեղծելու և, վերջապես յերբորդ կողմից՝ կուսակության դեմ վճռական պայքար մղելու ուղիներով։ Այդ նախապատրաստական շրջանում կուսակցությունը ձեռնարկեց զյուղատնտեսական մեքենաների և տքակտորների մատակարարման, այդ արտադրությունը հիմնելու և զարգացման բարձր տեմպեր ընդունելու քաղաքականությունը։ Այդ շրջանը նախապատրաստվում եր զյուղատնտեսական կոռպերացիալի լայն ցանցի զարգացմամբ, վորպես զյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման նախնական և ամենաստորին առաջնանը, յեղած թեև շատ քիչ, բայց այնուամենալիք մասսայական կոլեկտիվացման համար չափազանց կարեորդեր խաղացող կոլեկտիվ տնտեսություններով և, վերջապես, խորհրդակին խոշոր տնտեսությունների գոյությամբ, վորոնք հանդիսացան վոչ միայն վորպես սոսկ հացահատիկ արտադրող տնտեսություններ, այլև իրենց բարձր տեխնիկայով, արտադրողականությամբ և աշխատանքի կազմակերպվածությամբ չափազանց ներկործուն դեր խաղացին մասսայական կոլտնտեսական շաբաժման համար։ Մըան պետք ե ավելացնել հացամթերումների յերկու ատարվա դասակարգալին սուր պայքարի շրջանը, վոր չեր կարող իր կնիքը չգնի զյուղի հիմնական մասսաների վրա, վերջիններիս տնտեսության զարգացման սոցիալիստական ճանապարհն ընտրելու ուղղությամբ։

Ահա հենց այս հիման վրա լիր, վոր 1929 թվի յերկրորդ կիսին, կուսակցության 15-րդ համագումարից մոտ հերկու տարի հետո ծայր առաջ չքավոր և միջակ զբուղացիների շրջադարձը դեպի սոցիալիզմը, դեպի կոլտնտեսական շաբժումը: Մենք ականատես լեզանք այն բանին, թե ինչպես կուսակցության մարտական լուսնպը լուրացրած, սկզբում չքավոր, և ապա միջակ զբուղացիները մասսալորեն կոլտնտեսության մեջ մտան: Մենք ականատես լեզանք այն բանին, թե ինչպես կոլտնտեսական շաբժումն ընդգրկեց վոչ միայն առանձին զբուղացիական խմբեր և զուղեր, այլ նա չափազանց կարճ ժամանակամիջոցում ընդգրկեց ամրող շրջաններ ու մարզեր՝ շատ տեղերում վերածվելով համատարած կոլտնտեսական շաբժման:

Կուսակցությունն այդ շաբժմանը դիմավորեց խորանակառությունների ավելի լայն կազմակերպման և ֆինանսավորման գծով, կոլտնաշաբժման տարերակնությունը պլանավորելու, ճիշտ հունի մեջ դնելու, գեկավարելու և ֆինանսավորելու գծով, մեքենաների և որակագործական շինարարության զարկ տալու, ինչպես և մեքենա-որակագործական կայաններ հիմնելու գծով:

Այս անդուռ աշխատանքների շնորհիվ, անցած շրջանի այս հոկայածավալ աշխատանքի հիման վրա, ծայր տուած համատարած կոլտնտեսական շաբժումը բարա հանգիսացավ զբուղական մեր քաղաքականության վճռական շրջադարձի կիրառմանը, այն ե՛ կույակուրյան սահմանափակման բաղաբականությունից երան վարպես դասակարգ լիկվիդացիայի յենքարկելու բաղականությանը, «վոր սկիզբ դրեց մեր յեւկրի կյանքի մեծ բեկման շրջանին» (Ստալին):

## ՈՒԺԵՐԻ ՄՈՒԼԻՉԱՑԻԱՆ

Ահա այս պալմաններում կուսակցությունը պատրաստվում եր գարնան գյուղատնտեսական կամպանիալին. Կուսակցությունը նախապատրաստվում եր գարնանացանին՝ հրապարակի վրա ունենալով կուսակցության նօր բաղամականության վճռական շրջադարձը գյուղում՝ համատարած կորտնահսական բազալի վրա կուլակության վորպես դասակարգի վոչնչացման մաքտական և պատմական լրզունդը:

Ակսպիսով, այս գարնանացանն իր տնտեսական և քաղաքական ելությամբ, իր խնդիրների առաջադրումով և աշխատանքի ծավալով արմատապես տարբերվում եր մինչև այժմ լեղած բոլոր գարնանացաններից: Նա տարբերվում եր վոչ միայն և վոչ այնքան նրանով, վոր մենք առաջադրում ենինք ցանքսաղտերի և տեխնիկական մշակությունների լայնացման բարձրը նորմաներ, այլև զվարապես նրանով, վոր նա մարդկային պատմության մեջ առաջին անգամ պետք է իրազործիլեր միլիոննավոր չհավոր ու միջակ զյուղացիների միավորման, սոցիալիստական գյուղատնտեսության կազմակերպման, յեվ նույնպես պատմության մեջ առաջին անգամ զյուղի կուլակության վորպես դասակարգի վերացման բաղականության պայմաններում: Ահա թե ինչու այս գարնանացանն ամենայն իրավամբ կոչվեց բայլենվիկյան գարնանացան: Յեվ իրոք, միայն բայլենվիկների, կենինի կուսակցությունն ընդունակ է և կարող ե արմատապես վերակառուցել գյուղը և վերացնելով կուլակությունը վորպես դասակարգ՝ առաջ գնալ դեպի անդասակարգ հասարակությունը:

Ազդ խակ տեսակետից միանգամայն հասկանալի  
 է, վոր հերթական գարնանացանը մեղանից պահան-  
 ջելու լեր ուժերի և միջոցների մաքսիմում լարվածու-  
 թլուն, նախատեսված պլաններն իրագործելու համար,  
 Յեվ մենք ականատես լեղանք այն բանին, թե ինչ-  
 պես մեր վողջ կուսակցութլունը, պրոֆիլազմակերպու-  
 թլունը, բանվոր գասակարգը, կոմսոմոլը և վողջ կուլ-  
 տուրական ֆրոնտի մարտիկները լերեսով ուռու լեկան  
 դեպի զյուղ և իբենց անձնվեր ու լարված աշխատան-  
 քով բոլոր հնարավոր միջոցներով ոժանդակեցին գյու-  
 ղի հիմնական մասսաներին՝ գարնանացանի պլանն  
 իրագործելու համար; Առանձնապես անհբաժեշտ և  
 այստեղ մատնանշել ինդուստրիալ ոլորկատարիատի,  
 մեր լերկրի հեղեմոն գասակարգի ոժանդակող, կազմա-  
 կերպիչ և դեկավար դերը, նրա անձնվեր աշխատանքը  
 և նրա կատարած մեծ գործը գարնան գյուղատնտե-  
 սական կամպանիալին; Բավական և միայն վերհիշել  
 այն հարլուրավոր և հաղարավոր հարվածային վերա-  
 նորոգող բրիգադները գյուղում, հարլուրավոր և հազա-  
 րավոր կազմակերպիչ-ազիտատոր բանվորները չքավոր  
 և միջակ գյուղացիների շրջանում, 25,000-ականները  
 կորսնուստթլուններում, բանվոր գասակարգի արտա-  
 դրական ոժանդակութլունը գյուղին, շեֆընկերու-  
 թլունների և այլ կազմակերպութլունների մասսալա-  
 կան քաղաքական, կուլտուրական աշխատանքը գյու-  
 ղում, վորպեսի պարզ լինի այս գարնանացանի խմա-  
 տը; Դժվար կարելի յե գտնել խորհրդալին վորենե քա-  
 ղաքացի, վորն ուղղակի կամ անուղղակի, քիչ կամ  
 շատ չափով մասնակցած չլինի գարնան գյուղատնտե-  
 սական կամպանիալին; Միայն հայաստանում բանվո-

բական կաղմակերպությունները գարնանացանի ընթացքում մոտ 900 բանվորական որվա աշխատանք հետաբել գլուղում, հարվածալին և վերանորոգող բբիդագների միջոցով:

Բայլենիկիյան զարնանացանը վերածվեց միլիոնավոր մասսաների մինչեւ այժմ չտեսնված խանդավառ ռուժման տեսեսական յետ բնդաբական լայն կամպանիայի Նորդնապես գմբար և ալստեղ թվերով և փաստերով մեկ առ մեկ մատնանշել կամպանիայի ընթացքում կատարված աշխատանքները. հիշենք միայն, վոր ՍԽՀՄ մասշտարով առանձին կաղմակերպությունների կողմից (կուսակցություն, պրոֆեսիոնալիզմակերպություն, կոմսոմոլ և այլն) մոտ 250.000 ակտիվ աշխատողներ գործուղղվեցին գյուղը ժամանակավոր և մշտական աշխատանքի:

Այս կաղմակերպչական և կուլտուրա-քաղաքական աշխատանքներին գուգնիթաց հսկայական ծավալ ստացավ պետության կողմից գյուղին ցուց տրվելիք տընտեսական-տեխնիկական ոժանդակության գործը: Խորհրդավին իշխանության գյուղության պայմաններում (ել չենք խոսում ցարական Ռուսաստանի մասին) մեր գյուղը չի ստացել և վոչ մի տարբ ալնապիսի տնտեսական-տեխնիկական ոժանդակություն, ինչպիսին նաև ստացավ այս տարբի գարնան գյուղատնտեսական կամպանիային: Բավական և ալստեղ հիշատակել թեկող միայն Հայաստանի գյուղատնտեսության ստացած տընտեսական ոժանդակությունը, վորպեսզի կարելի լինի ընդհանուր գաղափար կաղմել բովանդակ ՍԽՀՄ գյուղատնտեսության մասին:

Հայաստանի գյուղն այս տարբի գարնան գյուղատնտեսական կամպանիային ստացել է 6182 դութան—

87,2 տոկոսով ավելի քան անցլալ տարի; մոտ 1200 փողի - 45 տոկոսով ավելի քան անցլալ տարի; բամբակի շաբացացն 524 հատ, 109,6 տոկոսով ավելի, ցարենի շաբացացն 300 հատ - 25,5 տոկոսով ավելի, սերմազախ մեքենա 456 հատ - 210 տոկոսով ավելի և այլ կարգի մեքենաներ, առանց տբակտոբների 2305 հատ - մոտ 30 տոկոսով ավելի քան անցլալ տարի; Կրկնապատճեց տրակտորների թիվը մեզանում յեզ կազմակերպվեց Սարդարաբատի մեքենա-տրակտորային կայանը: Հինգ տեղում կազմակերպված վերանորոգման աբհասատանոցներում վերանորոգման են լենթաբեկվել 139 տըրակտոր, 572 գութան, 286 ցորենի և բամբակի շաբացացն և 353 այլ կարգի մեքենաներ: Լայն ծավալ ըստացավ գլուղանտեսութիւնն վարկավորման գործը: Տասնյակ և հարյուրավոր ագրոնոմիական և մասնագիտական ուժեր գործուղղվեցին գլուղը: Աննախընթաց ընուլիթ ստացավ մասսայական ակտիվի վերապատրաստման գործը մեզանում: Բավական և միայն մատնանշել, վոր միայն Հայաստանում գութանացան կամպանիանի ընթացքում մասսայական ակտիվի (կոլտնտեսական ակտիվ, չքավորա-միջակալին ակտիվ, ազբույսորներ, ուսուցիչներ, խրճիթվարներ, ազբուտեխնիկներ և այլն) վերապատրաստման համաշ կազմակերպվեցին 200 կուբս 9466 լուղների համար 5 - 11 որ աեւզութիւմբ: Ահա սրանք են ընդհանուր գծերով գլուղանտեսական կամպանիայի նախապատքաստական վողջ աշխատանքները, վորոնցով վերապինված՝ կուսակցութիւնը դիմավորեց այդ կամպանիային: Վարոնք են սակայն գարնան գլուղանտեսական կամպանիայի արդյունքները:

## Ի՞ՆՉ ՏՎԵՑ ԳԱՐՆԱՆԱՑԱՆԸ

Գարնան գյուղատնտեսական կամպանիալի արդյունքները կայանում են նրանում, վոր կուսակցությանը հաջողվեց ՍԽՀՄ մասշտաբով դրեթե ամբողջովին իրազործել նախատեսված պլանը: Այս տարի բոլոր տվյալների համաձայն, հացահատիկալին մշակույթներից ցանքսի տարածությունը հասնում է նախապատերազմանի 105,1 տոկոսին, իսկ հացարուկսերի ընդհանուր արտադրանքը նախապատերազմանի 110 տոկոսին: Այսպիսով, այս տարի մեր հացահատիկալին դաշտերը տալիս են 10 տոկոսով ավելի արտադրանք, քան թև 1913 թիվը:

Ի՞նչպես ե դրությունը հացահատիկալին արտադրանքի ապրանքային մասում (այսինքն՝ արտապատուղարկին, շուկա հանվելիք հացահատիկալին արտադրանքը): 1927 թվին մենք ունեցել ենք հացահատիկալին ապրանքալին արտադրանք, նախապատերազման մակարդակի միայն 37 տոկոսը, 1928 թվականին - 36,8 տոկոսը (իջեցումը բացատրվում է աշնանացանի 20 տոկոսի փչացմամբ Ռւկրայինայում և Հյուսիսային Կովկասում), 1929 թ.-58 տոկոս, իսկ այս տարի՝ 1930 թվին ունենալու յենք նախապատերազմանի 73 տոկոսը: Այսպիսով, պարզվում է, վոր ռուկա նաց նաևնելու տեսակետից մենք դեռևս 27 տոկոսով ենք ենք մնում նախապատերազման մակարդակից, չնայած նրան, վոր մեր յերկրում 10 տոկոսով ավելի հացամբերք ե արտադրվում, եան 1913 թվին: Ինչով բացատրել այս հանգամանքը: Ինչ կասկած, այս հանգամանքը բացատըրվում է մեր յերկրի չքավոր ու միջակ գյուղացիների

անսահսական-նյութական զբության բարելավմամբ։ Դապահիք չե, վոր մեր գյուղի հիմնական մասսաներն աշխատավոր չառ հաց են սպառում, քան մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը Յարական կարգերի ժամանակ ճորտական և կիսաճորտական կյանք վարող գյուղացին ստիպված եր կիսաքաղց կյանք վարել վորպեսզի կարողանար վճարել կարգածատիրոջ և ցարական կառավարության հարկը և նրանցից ստացած վարելը կրկնապատիկ քանակով Խորհրդապետին իշխանության հարկացին և վարկալին քաղաքականությունը գալիս են նպաստելու չքավոր ու միջակ գյուղացիների տընտեսական զրության բարձրացմանը։

Ապրանեային հացահատիկի խնդիրը, վոր ավելի սուրկերով դրվեց մեր առաջ 1928 թվին, այս տարի եթմեականում լուծված կարելի է եամարել՝ խորհրդային յեկալութեայի տնօտերության միջոցով։

Ի՞նչ տվեց այս տարվա գարնանացանը խորհրդապատին և կոլեկտիվ տնտեսությունների ցանքսաղաշտերի տարածության գծով։ Հայտնի լե, վոր խորհուրդների համագումարում հաստատված 5-ամյա ծրագրի համաձայն, ըստոր տեսակի խորհրդապետին տնտեսությունների ցանքսերի տարածությունը 5-ամյակի վերջում պետք է կազմեր 5 միլիոն հեկտար։ Այնինչ, հենց այս գարնանացանից հետո, այսինքն 5-ամյա պլանի յերկրորդ տարում խորհրդալին անտեսությունների ցանքսաղաշտերի տարածությունը կազմում է 3,800,000 հեկտար, իսկ յեկող տարի, այսինքն 5-ամյակի յերրորդ տարում՝ 8 միլիոն հեկտար։ Այսպիսով, մենք խորհրդային տնօտերությունների ծրագիրը կատարում յեկ գերակայում ենք 3 տարում։ Նույն 5-ամյա պլանի համա-

ձայն, խորհ. տնտեսությունները ծ-ամյակի վերջում (1932 - 33 թվին) պետք ե տային 55,3 միլիոն ցենտներ հացահատիկային ընդհանուր արտադրանք (ցենտները մոտ 6 փութ ե), այնինչ նբանք արդեն ալս տարի տալիս են 28,2 միլիոն ցենտներ հացահատիկ, իսկ յեկող տարի տալու յեն 71,7 միլիոն ցենտներ, այսինքն՝ ծ-ամյա պլանը մենք կատարում լիլ գերակատարում ենք 3 տարում:

Ինչ վերաբերում ե կոլեկտիվ տնտեսություններին, այստեղ մենք ունենք ավելի նպաստավոր պահանջներ: Նախատեսված եր ծ-ամյակի վերջում կոլտրնեսուրյունների ցանկադաշտերի տարածուրյունը հասցնել 22 միլիոն նեկտարի, այնինչ այս տարի արդեն կոլտրնեսուրյունների ցանկադաշտերի տարածուրյունը հասնում է վաշ պահաս բան 36 միլիոն նեկտար, այսինքն՝ կատարել լիլ գերակատարել են կայտնեսուրյունները ցանկադաշտերի ծ-ամյա պլանը յիշկու տարում: Այժմ արդեն վողջ Խորհրդային Միության գյուղացիական տնտեսությունների 25 տոկոսը ընդգրկված ե կոլեկտիվ տընտեսություններում, իսկ հացահատիկային շրջաններում այդ տոկոսը հասնում է 40 - 50-ի: Անհրաժեշտ ե մատնահիններ, վոր ներկայումս մեր կոլտնտեսությունների ցանքսադաշտերի տարածությունը կազմում է այնքան ինչքան Ֆրանսիայի և Իտալիայի ցանքսերի տարածությունը միասին վերցրած:

Հնդամյա պլանի համաձայն, հացահատիկային խորհրդային ե կոլեկտիվ տնտեսությունները ծ-ամյակի վերջում մեզ պետք ե տային 190 ու կիս միլիոն ցենտներ հացահատիկային արտադրանք: Իսկ իրականում նբանք ալս տարի տալու յեն 256 միլիոն ցենտ-

ներ հացահատիկալին արտադրանք։ Այս նշանակում է, վոր մենք կոլտնտեսությունների և խորտնտեսությունների հացահատիկալին արտադրանքի պլանը կատարել և գերակատարել ենք 2 տարում։ Այս բոլորի հրման վրա, այս տարի միայն կորեկտիվ տնտեսությունները տալու յին 250,000 ցենսներ նացանափկալին թնդնանուր արտադրանք յիվ 83,000 ցենսներ (500,000,000 փուր) ապրանքային նազ, վորը կազմելու յի մեր յերկրի ամբողջ ապրանքային նազի 50 տոկոսը։

Այս փաստերը վկալում են այն մասին, վոր ռպուղատնտեսությունն հիմնական պրորեմների բախտը որանից հետո վիրաշելու մեն վոչ թե անհատական գլուղացիան անտեսությունները, այլ կոլլեկտիվ և խորհրդագլուխ անտեսությունները (Ստալին)։ Ահա թե ինչպես կուսակցությունը լուծում է հացահատիկի խնդիրը մեր լեռկրում։ Այս տարի մենք վոչ մէայն կարող ենք հացի վորոշ պաշար ստեղծել ալիև վորոշ քանակությամբ հաց արտահանել մեր լեռկրից։

Ի՞նչպես և գլուղատնտեսական այլ տեխնիկական կուտարանների ցանքադաւաշերի տարածության դրությունը։ Այսաւեղել ավելի բարենպաստ պարմաններումն ենք գանգում։ Այսպես որինակ՝ բամբակի ցանքսաղացի տարածությունն անցյալ տարի կազմում եր նախարարական մակարդակի 151,4 տոկոսը այս տարի կազմում է 180,6 տոկոսը, վուշը՝ անցյալ տարի 112,9 տոկոս, այս տարի՝ 125 տոկոս, շաքարի ճական-գեղը անցյալ տարի՝ 125,8 տոկոս, այս տարի 169 տոկոս։ Զիթառու մշակություններ՝ անցյալ տարի 219,7 տոկոս, այս տարի 260 տոկոս։ Տեխնիկական մշակությունների թնդնանուր արտադրանքը նույնպիսի նպաստավոր

պատկեր և տալիս Ալսպիս որինակ՝ բաժրակինը այս  
տարի տալու լեռ 182,8 տոկոս ընդհանությանը արտադրանք,  
վուշը՝ 101,3 տոկոս, շաքարի ճակնդեղը 139, 4 տոկոս,  
ձիթապտուղները՝ 220 տոկոս։ Ալսպիսով, աելմանիկա-  
կան մշակուլիթների գծով այս տարի մենք ունենք հըս-  
կալական նվաճումներ։ Մեր զբությունն անմիջիթարա-  
կան և անասնապահության զարգացման գծով, սա-  
կայն հացահատիկի պրոբլեմի վերջնական լուծումը,  
ինչպես և կուսակցության ձեռք առած վճռական մի-  
ջոցները (անասնապահական խոշոր խորհրդավիճ և կու-  
լեկտիվ տնտեսություններ կազմակերպելում) հնարա-  
վորություն կտան մոտ ապագայում լուծելու նաև այդ  
հարցը։

Պարզվում է, վոր հացահատիկի պրոբլեմի լու-  
լուծումը հանդիսանում և զբուգատնակետության միուն  
պրոբլեմների լուծման բանալին։ Միանգամայն հասկա-  
նալի չե, վոր առանց լերկիթը հացահատիկով առանո-  
ելու և առանց վոչ հացահատիկավիճն շրջանները հացա-  
հատիկով բավարարելու, հնարավոր չե զարգացնել վոչ  
տեխնիկական մշակուլիթները և վոչ ել անասնապահու-  
թյունը։ Այստեղից ել ներկայումս մեր առաջ զբվում և  
հացահատիկի հարցի վերջնական լուծումը, վորին ձեռ-  
նարկել և մեր կուսակցությունը իսկ հացահատիկի  
պրոբլեմի վերջնական լուծումը հնարավոր և միայն  
խորհրդավիճն և կոլլեկտիվ տնտեսությունների միջոցով  
(քանի վոր մեզ համար անընդունելի չե զբուգատնա-  
սության զարգացման կազմակերպությունները),  
վորն ի վիճակի լե զինել զբուգատնակետությունը տբակ-  
տորներով և մեքենաներով, բարձրացնել աշխատանքը  
արտադրուգականությունը և ապրանքավիճն լելուլիթը։

ի՞նչ արդյունքներ տվեց գարնանացանը Հայաստանում: Այս տարվա բալլունիկան գարնանացանը վորք կիրառվեց դասակարգավիճն կատաղի պալքարի պալմաններում, «Քեկման ետապ հանդիսացավ Հայաստանի գյուղատնտեսության զարգացման նամար» (ՀԿԿ (թ.) ԿԿ-ի բանաձեից): Այդ բալլունիկան գարնանացանի ընթացքում առաջին անգամ բուռն թափով աճեց գյուղի սոցիալիստական հատվածը (խորհրդավիճն և կոլեկտիվ անտեսություններ) մեր լեռկրում: Այսպես որինակ՝ կոլտնտեսությունների տեսակարար կշիռը անհատական անտեսությունների նկատմամբ բարձրացավ  $13,7\%$  ընդունմ 1929 թվի  $2,5\%$  -ի: Խորտնտեսություններինը՝  $1,7\%$  ընդունմ 1929 թվի  $0,4\%$  -ի: Այս հիման վրա ել անհատական անտեսությունների տեսակարար կշիռը ի դիմաց 1929 թվի  $97,1\%$  -ի իջազ  $84,6\%$  այս տարի:

Չնայած կոլտնտեսությունների կազմակերպման ընթացքում թույլ տված կողիտ սխալների մեր կուսակցությանը հաջողվեց իրագործել գարնանացանի նախատեսված ընդհանուր պլանը  $90\%$  -ով: Այդ թվում կոլտնտեսական պլանը  $99,9\%$  -ով, իսկ անհատական հատվածի պլանը  $90,8\%$  -ով: Կոլտնտեսությունների ցանքսաղաղտերի տարածությունը անցյալ տարվա համեմատությամբ ավելացավ  $461,7\%$  -ով կամ ավելի քան  $4$  ու կես անգամ: Խորտնտեսություններինը՝  $384,7\%$  -ով, կամ մոտավորապես  $4$  անգամ: Ընդարձակվեց ցանքերի տարածությունը  $39,6\%$  -ով, այդ թվում ծխախոտինը՝  $134,5\%$  -ով, կերի, խոտերի և արմատապտուղների տարածությունը  $59,9\%$  -ով: Գյուղի կոլեկտիվացումը առ 1-ն հունվարի 30 թվի  $4,8\%$  -ից բարձրացավ  $11\%$  -ի առ 1-ն հունվարի 30 թվի: Ահա սրանք են

բալլակիկան գարնանացանի հիմնական նվաճումները  
Հայաստանում:

\* \* \*

Բովանդակ ՍԽՀՄ-ում և Հայաստանում կուսակցությունն այս հաջողությունները ձեռք բերեց տրոցկիստական ոպպողիցիալի մնացորդների ջախջախման և, վոր գլխավորն ե, աջ ոպպորտյունիզմի դեմ ամենավճռական պայքար մղելու նշանարանով։ Հայտնի յե, վոր աջ ոպպորտյունիստները դեմ արտահայտվեցին խորհրդավին և կոլեկտիվ տնտեսությունների կուսակցության կողմից նախատեսված տեմպերին։ Հայտնի յե, վոր նրանք հացահատիկի պրոբլեմի և ընդհանրապես գյուղատնտեսության զարգացման պրոբլեմի լուծում համարում ելին վոչ թե խորհրդավին և կոլեկտիվ տընտեսությունների կազմակերպումը, այլ առաջադրում ելին արտասահմանից հաց ներմուծելու և միայն անհատական տնտեսությունների վրա հիմնվելու և վերջինիս անընդհատ և անսկզբունք զիջումներ անելու քաղաքականությունը։ Հայտնի յե նաև այն, վոր աջ ոպպորտյունիստները կուլակի դեմ վճռական հարձակում գործելու կուսակցության ձեռնարկած քաղաքականությունն աշխատում ելին փոխարինել կուլակին սոցիալիզմի մեջ ներաճելու քաղաքականությամբ, այսպիսով լիովին արտահայտելով դասակարգային թշնամու շահերը և այն ել հատկապես այն շրջանում, յերբ կուսակցությունը ստիպված եր ամենաանողոք պալքար մղել կուլակության դեմ և կիրառել կուլակության վորպես դասակարգի վերացման քաղաքականությունը համատարած կոլտնտեսական շրջաններում։

Աջ ոպպորտունիզմի հաղթանակը մեր լերկրում մեզ կտաներ դեպի գլուղի կուլակալին տարրերի ուժեղացումը, բանվորա-գլուղացիական դաշինքի թուլացումը, հետեապես և կապիտալիզմի վերականգնման հնարավորությունները մեր լերկրում։ Ահա հենց ալդեր պատճառը, վոր աջ ոպպորտունիստների տեսակետներն անմեջապես արձագանք գտան բոլոր կուլակալին և հակախորհրդալին տարրերի մեջ, և կուլակներից շատերն աջ ոպպորտունիստների արևով սկսեցին լերդվեր։ Աջերն որինեկտիվորեն դարձան կուլակների իդեոլոգը, նրանց գաղափարական դեկալարը և մեր զարգացման ներկա շրջանի հիմնական վտանգը։

Կուսակցությունը ստիպված լեղավ ամենազաժան պայքար ծավալել աջերի դեմ, մերկացնել նրանց արտահայտած փաստորեն կուլակալին տեսակետները, հաղթահարել և ջախջախնել կուլակի կատաղած դիմադրությունը և վճռականորեն առաջ տանել իսկական բալլեիլան լինինլան քաղաքականությունը գլուղի սոցիալստական վերակառուցման ասպարիզում։ Առանց կուսակցության լինինլան հստակ գծի կիրառման, առանց ալդ գծից կատարվող բոլոր թեքումները հաղթահարելու, առանց ամրող ֆրոնտով կուլակի վըրա հարձակում գործելու, անհնար եր իրազործել բալլեիլան գարնանացանի ոլլանը, անհնար եր ձեռք բերել ալդ հսկայական հաջողությունները խորհրդալին և կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպման ասպարիզում։ Սակայն այդ նվաճումներն ԽՍՀՄ-ի լեվ Հայաստանի մասնաբով անհամեմատ ավելի շատ կլինելին, յերե կուսակցական մի շարք կազմակերպություններ (վորոնց բիում նաև Հայկոմկուսը) բույլ չտային բաղախ-

կան կոպիս սխալներ կուսակցության գլխավոր գծից՝  
այս տարվա գարնան գյուղատնտեսական կամպանիա-  
լին։ Վերոնք են այդ սխալները։

## ԿՈԼՏՆՏՇԱՐԺՄԱՆ ՍԽԱԼՆԵՐԸ

Կոլտնտշարժման ասպարիզում կատարված սխալ-  
ների արմատը կայացավ միջակի նկատմամբ ճիշտ մո-  
տեցում չունենալու մեջ։

Հայտնի յե, վոր բանվոր դասակարգը չքավոր  
գյուղացիության հետ միասին, կոմմունիստական կու-  
սակցության ղեկավարությամբ ամուր դաշինքի մեջ և  
գտնվում միջակ գյուղացիների հետ։ Հայտնի յե, վոր  
պրոլետարիատի դիկտատուրայի գերազույն (ամենա-  
բարձր) սկզբունքն ե՝ պահպանել այդ դաշինքը գյու-  
ղացիության հետ։ Այդ ամուր դաշինքի հիման վրա  
բանվոր դասակարգը, գյուղի հիմնական մասսաների հետ  
միասին, անխնա պահպան և մղում կապիտալիստների  
դեմ ընդհանրապես և գյուղի կուլակության դեմ մաս-  
նավորապես։

Բանվոր դասակարգի դաշինքը դաշինք և վոչ թե  
ընդհանրապես «բոլոր» գյուղացիների հետ, ինչպես ա-  
ջերն ելին կարծում այլ այդ դաշինքը կազմվում և բա-  
րուկների յեկ չփակուների վրա ուստ ամուր հենվելու, խոր-  
հըրդային գյուղի գյուղացիական միծամասնությունն  
կազմող միջակի հետ համաձայնուրյան կայացնելու յեկ  
կուլակի դեմ անխնա պայքար մղելու քաղաքականու-  
րյան հիման վրա։ Առանց այս յերեք պայմանների  
բանվոր դասակարգի դաշինքը գյուղացիության հետ  
կորցնում և իր լենինլան նշանակությունը, ի՞նչով  
բացատրել գյուղացիության նկատմամբ ալսպիսի շեր-

տավորված մոտեցում ունենալը։ Դա բացատրվում է մեր դասակարգավիճ քաղաքականությամբ։ Մեր պետությունը բանվորական պետություն է, վորին դաշնակցում են չքավոր ու միջակ գլուղացիները՝ բանվոր դասակարգի զեկավարության պահմանով։ Գլուղում բանվոր դասակարգին ամենամոտ խավը հանդիսանում է չժավորությունը (պըոլետարներ և կիսապըոլետարներ)։ Այդ մոտիկությունը պահմանավորվում է նրանց տնտեսական դրությամբ։ Նրանց մեծ մասն ապրում են վարձու աշխատանքով։ Մյուս մասը թեև ունի վորոշ սեփականություն, սակայն այնքան չնշին է, վոր նա չի կարող ապրել, առանց տարվա մեծ մասը ուրիշի մոտ վարձու աշխատանք կատարելու։ «Յերբ իշխանությունը պատկանում էր պամեշչիկներին ու կապիտալիստներին, ամբողջ նրանց (պամեշչիկների և կապիտալիստների Ռ. Հ.) ճնշումն ընկենում էր ամենից շատ չքավորների վրա»—ասում է Լենինը։ Այսպիսով, չքավորները և վոչալ վոք ամենից շատ սորկացման և շահագործման են լենթարկվել կալվածատերների և կապիտալիստների կողմից։

Բոլոր լերկրներում, ինչպես Ռուսաստանում բանվոր դասակարգի՝ կապիտալիզմի դեմ մղած պարագարում մասնակցել և ոժանդակել և ամենից շատ չքավոր գլուղացիությունը։ Այստեղից միանգամայն պարզ է, վոր չքավորությունը և վոչ ալ վոք կարող է խորհրդավիճ իշխանության հաստատուն հենարանը հանդիսանալ գլուղում։

Լենինիզմի այս սկզբունքը չի հակասում, կամ չի ժխտում կուսակցության 16-րդ համագումարի այն հայտնի վորոշումը՝ վորի համաձայն ալսուհետեւ ԽՍՀՄ

կարեորագուշն հացահատիկալին շրջաններում կոլտըն-  
տեսականները, վորոնց քվում յել միջակները հանդիսա-  
նան խորհրդալին իշխանության իսկական և հաստա-  
տուն հենարանը: Ընդհակառակը, նա հանդիսանում ե-  
լինինլան այն ճիշտ քաղաքականության անմիջական  
հետեանքը և նրա բարձր աստիճանը, քանի վոր հաս-  
տատապես կոլտնտեսություն մտնող միջակ գյուղացին  
վորը ընտրել ե իր տնտեսության զարգացման սոցիա-  
լիստական ճանապարհը, վորը անցել ե հացամթերում-  
ների 2 տարվա դասակարգային պալքարի բովով, վո-  
րը չքավորների հետ միասին պալքարել ե կուլակի դեմ  
հանուն կոլտնտեսությունների կազմակերպման նա-  
արդեն այն միջակը չե, ինչ վոր եր յերեկ, կամ կոլ-  
եկտիվից դուրս գտնվող այսորվա միջակը, և գտնվե-  
լով կոլլեկտիվում չքավորի հետ միասին նա հանդի-  
սանում ե խորհրդային իշխանության իսկական և հաս-  
տատուն հենարանը:

Գյուղում յեղած յերկրորդ խավը հանդիսանում են  
կուլակները. սրանք պատկանում են կապիտալիստնե-  
րի դասակարգին, ունեն համապատասխան արտադրա-  
կան կապիտալիստական հարաբերություն, վորը հմա-  
նըված ե շահագործման վրա: Նրանք շահագործում են-  
ուրիշի աշխատանքը, լինի դա վարձու բանվորները  
պահելու, փող կամ գյուղատնտեսական ապրանք ու-  
ինվենտար ստրկացուցիչ պայմաններով ուրիշին տա-  
լու կամ թե չե առեւտրի միջոցով:

«Կուլակները ամենագազանալին, ամենակոպիտ,  
ամենավայրենի շահագործողներն են, վորոնք ու-  
րիշ յերկրների պատմության մեջ մի քանի ան-  
գամ վերականգնել են կալվածատերերի, թագավոր-

ների, տերտերների, կապիտալիստների իշխանությունը: Կուլակները կալվածատերերից և կապիտալիստներից զատ են, բայց այնուամենայնիվ կուլակը փոքրամասնություն և կազմում ժողովրդի մեջ... Այդ սարդերը գերացել են իհաշիվ պատերազմի հետեանքով քալքայված դյուզացիների, իհաշիվ քաղցած բանվորների: Այդ ողբուկները խմել են աշխատավորների արյունը: Այդ վամպիրներն (արյուն ծծողներ) առել են և առնում են կալվածատիրական հողերը իրենց ձեռքը, նընրանք նորից են ստրկացնում չքավոր գյուղացիներին—ահա թե ինչպես և բնորոշում կուլակներին ընկ-լենինը: Կուլակների դեմ խորհրդային իշխանությունը անխնա պայքար և մղում: Մինչև այժմ խորհրդավին իշխանությունը կիրառել և այդ սարդերի և վամպիրների շահագործման սահմանափակման քաղաքականություն, բայց այսուհետեւ ել հանդուրժել նրանց «վորոնք հրդեհում են կոլտնտեսությունները, սպանում կոլտնտեսական գործիչներին և փորձում են վիճեցնել սերմանման գործը—նշանակում և դեմ գնալ բանվորների գյուղացիների շահերին: Այդ պատճառով կուլակության վորպես դասակարգի վերացման քաղաքականությունը պետք է կիրառվի ամրող այն հաստատակամությամբ և հետևողականությամբ վորին ընդունակ ենք միայն մենք» (Ստալին):

Գյուղացիության յերրորդ խավը կամ յերբորդ խումբը հանդիսանում է միջակ գյուղացիությունը: Սրանք խորհրդավին իշխանության թշնամիները չեն: Սրանք պրոլետարիատի դաշնակցը կարող են լինել, չեթե պրոլետարիատը նրանց նկատմամբ ճիշտ քաղաքականություն վարի:

Միջակ գլուղացիները, վորոնք կալվածատիրական և կապիտալիստական պայմաններում ավելի քիչ մասսա լին կազմում, (շնորհիվ կապիտալիստների և կալվածատերերի ճնշմանը, նրանց ճնշող մեծամասնությունը քայլայվում, չքավոր ու պրոլետարդառնում և նրանցից շատ փոքր մասին միայն հաջողվում և կուլակների խումբն անցնել) խորհրդավին իշխանության պայմաններում նրանք կազմում են գլուղացիության մեծամասնությունը, շնորհիվ խորհրդավին իշխանության հողային, վարկային և հարկային քաղաքականության։ Այդ քաղաքականության շնորհիվ, չքավորների զգալի մասը գնում և դեպի միջակ գլուղացիությունը։ Նույն այդ քաղաքականության շընորհիվ, կուլակների վորոշ մասն ել միջակների խումբն և անցնում։ Այսպիսով, խորհրդավին գլուղում միջակ գլուղացիությունը հանդիսանում գլուղացիության կենտրոնական դեմքը, գլուղացիության մեծամասնությունը և գլխավոր արտադրողը գլուղում։ Միջակը ուրիշի աշխատանքը չի շահագործում, նա ներկայացնում և իրենից աշխատավոր գլուղացի այնքան, վորքան ինքն աշխատում է։ Սակայն որա հետ միասին, վորպես հաց և առհասարակ գլուղատնտեսական այլ արտադրանք վաճառող՝ նա հանդիսանում և միենուկն ժամանակ մասնավոր սեփականաեր յել առելիքրական։ Այսպիսով, մանր տնտեսատեր գլուղացին՝ միջակն իր մեջ մարմնավորում և յերկու հատկություն--աշխատավորտիան, վորի վրա հենվելով պրոլետարիատը դաշնակցում և միջակ գլուղացիության հետ, նրան սոցիալիստական վերափոխման լենթարկելու նպատակով, և մանր սեփականատիրական - ա-

ունվտրական, վորը ձգում և նրան դեպի կապիտալիզմը, դեպի դուղի կուլակը, վորի դեմ պրոլետարիատը պարքարում և մի կողմից սոցիալիստական սեկտորի զարդացման միջոցով (կոոպերացիալիտի, խորհրդական և կուլիկափի տնտեսությունների զարդացմամբ), իսկ մյուս կողմից՝ կապիտալիզմի և կուլակության դեմ անխնա ոլալքար մղելու, նրա շահագործողական տենդենցները սահմանափակելու և ներկայումս արդեն համատարած կոլեկտիվացման շրջաններում կուլակին վորպես դասակարգ վերացնելու քաղաքականությամբ։ Միջակի այս լերկակի (լերկու) հատկությունը նրան պահում և չառանման մեջ։ Նա գոտնվում և պրոլետարիատի, սրբան գումարած գլուղական պրոլետարիատի, և կապիտալիզմի՝ սրբան գումարած գլուղական կուլակի միջև, վորպես մանր բուրժուական դասակարգ։ Այսպիսով, միջակը տարբերվում և և չքավորից, և կուլակից։ Նայած թե պրոլետարիատն ինչպիսի քաղաքականություն կվարի դեպի միջակ գլուղացիությունը, ըստ այնմ ել նա կլինի պրոլետարիատի կամ կուլակի կողմը։ Մեր քաղաքականությունը բարորագին տարբեր է միջակի և կուլակի նկատմամբ։ Յեթե կուլակի դեմ մենք անխնա պալքար ենք մղում մեր ամրող քաղաքականությամբ (հարկացին, վարկային, հողային, քաղաքական իրավունքի և այլն) և այժմ վորպես դասակարգ վոչնչացման քաղաքականությունն ենք վարում համատարած կոլեկտիվացման շրջաններում, ապա միջակի նկատմամբ մենք վարում ենք նրան սոցիալիստական վերափոխման յենքարկելու, իրա հետ դաշնակցելու նրան վերամշակելու հաղանականությունը կամավոր համոզման յեկ փորձի նիման վրա։

Ահա հենց լենինիզմի ալս հիմնական սկզբունքը մոռացության մատնեցին կուսակցական մի շարք կաղմակերպություններ՝ ալս տարվա գարնան գյուղատընտեսական կամպանիալին։ Այդ կազմակերպությունների թվին ե պատկանում Հայաստանի Կոմկուսը։ Կուլակի դեմ վճռական պայքար մղելու քաղաքականությունը, վորն անհրաժեշտ ե մեր գասակարգային թըշնամուն ջախջախելու համար, այդ քաղաքականությունը շատ տեղերում տարածվեց նաև միջակ գյուղացիության վրա։ Մեծ քանակությամբ փաստեր կարելի լերերել այն մասին, թե ինչպես ալս տարի գարնանը, կուտնտեսություններ կազմակերպելու ընթացքում, կուլակների շարքը դասեցին բավական քանակությամբ միջակների և նրանց ևս ապակուլակացման լենթարկեցին։ Մոռացվեց, վոր միջակը հանդիսանում երանվոր դասակարգի և չքավոր գյուղացիության դաշնակիցը, ըստ վորում պայքարը կուլակի դեմ և առավել ևս կուլակի, վորպես դասակարդի վերացումը տեղի ունեցավ վոչ թե այդ դաշինքի ամրապնդման հիման վրա, այլ այդ դաշինքի խղման վտանգի պայմաններում, մատնանշված ռայոններում։ Կուլակների դեմ բռնություն գործ դնելու քաղաքականությունը գործադրվեց նաև միջակ գյուղացիության նկատմամբ։

Այսպիսով ել ավելի սրվեց միտջկի տատանումը, և կուլակն ոգտվելով ալս հանգամանքից՝ փորձ արեց վոտքի կանգնելու ընդդեմ կուտնշարժման և ընդդեմ խորհըրդային իշխանության։ Այստեղ միանգամ ևս ապացուցվեց, վոր չի կարելի մեր թշնամի կուլակի վրա հարձակվելու քաղաքականությունը գործադրել նաև մեր դաշնակցի, միջակի նկատմամբ։

«Զկա ավելի նիմար բաց, — ասում ե Լինինը, — քան  
միջակ գյուղացու նետ Տնտեսական հարաբերությունների  
պահպանման ասպարհում բռնուրյան մասին անգամ  
մտածելը: Այսպես ուրեմն, միջակ գյուղացիության նը-  
կատմամբ բռնություն վոչ թե գործել, այլ մտածելն  
անգամ ամենամեծ հիմարություն և համարում Լինինը:  
Պարզ ե, վոր ալդ շբջաններում կոպիտ կերպով խախտ-  
վել և լենինիզմի՝ միջակի գյուղացիության նկատ-  
մամբ ունեցած սկզբունքը և այս հանդամանքը ստի-  
ուդեց միջակների մեծ մասին՝ թողնել կոլեկտիվ տըն-  
տեսությունը: Սա առաջին և հիմնական սխալն եր այս  
տարիա գարնան գյուղատնտեսական կամպանիայի  
ընթացքում: Սակայն այդ սխալով չվերջացավ գործը:  
Այդ սխալի հետ միասին թույլ տրվեցին նաև այլ սը-  
խալներ կոլտնտեսական շաբժման ասպարիզում: Վհ-  
րոնք ելին ալդ սխալները:

Առաջինը — խախտվեց կոլտնտեսությունների կազ-  
մակերպման կամավորության լենինյան սկզբունքը:  
Լինինը մեզ սովորեցրել և գյուղական տնտեսությունները կոոպերացման և կոլեկտիվացման լենթարկել գյուղացիներին համոզելու, նրանց կոլեկտիվ տըն-  
տեսության առավելությունների անհատական տնտե-  
սության նկատմամբ ցույց տալու և առհասաբակ փոր-  
ձի հիման վրա: Մենք դիտենք, վոր գյուղացին շատ  
գործնական մարդ է: Շատ դեպքում նա մի բանի չի  
հավատա, մինչեւ իր աչքով չտեսնի և անձամբ չհա-  
մոզվի դրանում: Նրան չի կարելի ստիպել կոլեկտիվ  
տնտեսության մեջ մտնելու, քանի վոր մենք դեռևս  
նրան չենք համոզել կոլեկտիվ տնտեսությունների  
առավելությունների մեջ: Բավական չե կուսակցու-

թյան՝ մասսաներին առաջադրած այս կամ այն լուզունգը, վորպեսզի նա կիրառվի կյանքում։ Բավական չե, վոր մենք համատարած կոլտնտեսության և կուլակի լիկվիդացիայի լողունգն առաջադրենք, վորպեսզի նա անմիջապես կիրառվի ամեն տեղ, ինչ պայմաններում ել լինի։ Անհրաժեշտ և յերկարատես և համապաշտանք տանել, վորպեսզի մասսաները ըմբռնեն և յուրացնեն կուսակցության լոգունգը, համոզվեն այդ լողունգի ճշտության մեջ, վորպեսզի համախմբվեն կուսակցության շուրջը՝ այդ լողունգն իրազործելու համար։

Հենց այդպես ել յեղավ, ինչպես սկզբում ասացինք, — կոնկրետ՝ գլուղի կոլլեկտիվացման լողունգը կիրառելիս։ Գլուղի կոլլեկտիվացման լողունգն առաջադրվեց 15-րդ համագումարի կողմից 1927 թվի դեկտեմբերին, սակայն այն մասսայական կիրառման բընույթ ստացավ միայն 1929 թվի աշնանը, յերբ գյուղի հիմնական մասսաները համոզվեցին այդ լողունգի ճշտության մեջ։ Սա լենինիզմի կարևորագույն խնդիրներից մեկն ե։ Լենինիզմի այս կարևորագույն սկզբունքներից մեկը գյուղացիական հարցում, շատ շրջաններում և գյուղերում խախտվեց։ Բազմաթիվ փաստեր կարելի յե բերել այն մասին, թե ինչպես, մեր կուսակցական և խորհրդակին աշխատողներն ուղղակի ստիպել են չքավոր ու միջակ գյուղացիներին, բռնություն են գործ դրել նրանց վրա, սպառնացել են նրանց վարկ և ապրանք բաց չթողնելով, վորպեսզի նրանք կոլլեկտիվ տնտեսության մեջ մտնեն։ Շատ փաստեր կարելի յե բերել այն մասին, թե ինչպես մի շարք գյուղերում հայտարարել են՝ ով կոլլեկտիվ չմտնի՝ նա խոր-

հրդային իշխանության թշնամին եւ Ահա հենց սա  
յեր պատճառը վոր մեզահում կոլտնտեսություններն  
այդ շրջանում աճում ելին վոչ թե ոբերով, ալ ժամ-  
առ-ժամ:

Կոլեկտիվացման տոկոսները թոշում եյին, մենք  
չեյինք կաբողանում նրանց հատեիցն հասնել մեկ կամ  
միքանի ժամկա մեջ ամրողջ գյուղը կոլեկտիվացման  
եր յենթաքիվում: Յեզ այս բոլորի մեծ մասը կատար-  
վում եր ստիպմամբ, միջակների վորոշ մասին կուլակ-  
ների շարքը զատելու, ինչ դնով ել լինի՝ անընդհատ  
տոկոսները բարձրացնելու պայմաններում: Մոռացու-  
թյան լենթաքիել ամեն ինչ և միան բարձրացնել կոլ-  
եկտիվացման տոկոսները, հետ չմնալ հարեան գյու-  
ղից, թեկուզ ցուցակագրության կարգով կոլեկտի-  
վացման յենթաքիել ամրողջ գյուղը, շրջանը, դավա-  
ռը, — ահա կուսակցական և խորհրդային մի շարք կազ-  
մակերպությունների և աշխատողների ցանկությունն  
ու աենչը: Հայտնի յե, վոր մեր կուսակցությունը  
հանձինս ընկեր Ստալինի՝ նման աշխատողներին  
«քյալազգող» անունը տվեց, իսկ այդ քաղաքականու-  
թյանը՝ «քյալազգողություն»: Յեզ իսկապես, պետք  
է քյալազգող լինել, առանց նորմալ աչքեր ունենա-  
լու, նման «քաղաքականություն» վարելու համար:

Շատ հասկանալի և պարզ ե, վոր զոռով, ցուցակա-  
զրությամբ կազմակերպված ալդ թղթե կոլեկտիֆները  
պետք է հալվեյին ու քալքայվեյին — ինչպես այդ յե-  
ղափ — նույն տեմպով և նույն արագությամբ, ինչպես  
նրանց կազմակերպման շրջանում: Լենինն ասում են—  
«Գյուղատնտեսական կոմմունան հիմնվում ե կամավոր  
կերպով, հողի հանբալին (կոլեկտիվ) մշակման փո-

խանցումը կարող ե լինել միայն կամավոր։ Բանվորագուղացիական կառավարության կողմից վոչ մի ամենաշնչին հարկադրում չի կարող լինել այդ ասպարիզում և որենքն այդ չի թուղարում։ Յեթե ձեզանից վորեմ մեկը նկատել ե այդպիսի բան, ապա դուք պետք ե գիտենաք, վոր այդ չարարկում ե, վոր դա ուրենքի մի խախտում ե, վոր մենք ամեն կերպ աշխատում ենք ուղղել և կուղղենք»։ Միանգամայն հասկանալի լե, վոր ամենակոպիտ կերպով խախտվել են Լենինի ալս ցուցմունքները այդ մի շարք շրջաններում։

Այնուհետև մի ուրիշ տեղ Լենինն ասում ե, — «Խորհրդավին իշխանության այն ներկայացուցիչները, վորոնք իրենց թուցի կտան գործադրել վոչ միայն ուղղակի, այլև թեկուզ զարտուղի հարկադրում պյուղացիներին կոմմունալին միացնելու նպատակով՝ պետք ե լենթարկվեն ամենախիստ պատասխանատվության և հեռացվեն գյուղի աշխատանքից»։ — Հենց այդպես ել վարվեց մեր կուսակցությունը։

Յերկրորդ սխալ. — Խախտվեց լենինիզմի սկզբունքը, վորի համաձայն մեր քաղաքականությունը կիրառելիս պետք է հաջու առնել Խորհրդավին Միության բազմազան շրջանների առանձնահատկությունները, նրանց պայմանները, քաղաքական ու կուտառքական մակարդակը, կենցաղը և այլն։ Լենինը մեզ սովորեցրել ե, վոր կուսակցության լողունգները կիրառելիս պետք ե լենել կոնկրետ պայմաններից և վոչ թե զեկավարվել ընդհանուր շարլոնով։ Յեթե Ռուսաստանի առաջավոր գյուղատնտեսական շրջաններում այժմ խև հընարավոր ե համատարած կոլեկտիվացման և կուլակին վորպես դասակարգ լիկվիդացիայի լենթարկելու

քաղաքականությունը կիրառել շնորհիվ այն բանի, վորագիտում մենք ունենք գյուղացիների տնտեսական և կուլտուրական մակարդակի ավելի բարձր աստիճան, վորտեղ գյուղատնտեսությունն ավելի շատ ե մեքենացման լենթարկվել վորտեղ անհամեմատ ավելի ուժեղ են մեր կուսակցական, կոմիերիտական և այլ կազմակերպությունները, վորտեղ դասակարգավոր շերտավորումն ավելի խորն և զնացել և վերջապես, վորն անցել և հացամթերումների լերկու տարվա դասակարգավոր պալքարի սուր շրջանով, ապա այժմ լեկ եր միյեվնույն լեղանակով այդ քաղաքականությունը չի կարելի կիրառել դիցուք ասենք, Անդրկովկասի մեծ մասում կամ Հայաստանի, լենթադրենք, Բասարգեչարի, Ալլարաբի և Թալինի շրջաններում, վորտեղ գյուղատնտեսությունը շատ հետամնաց և, ապրանքայնությունը թուլք գյուղի հիմնական մասսաների կուլտուրական և քաղաքական մակարդակը շատ ցածր և, վորտեղ մեր կուսակցական և կոմիերիտական ու խորհրդավոր կազմակերպությունները թուլլ են, վորտեղ դասակարգավոր շերտավորումը դեռևս անհրաժեշտ չափով գոյություն չունի (գյուղացիները իրենք չգիտեն ով և կուլտակը, ով և միջակը), վորտեղ դեռևս տիրապետում են կալվածատիրական մնացորդները, վորտեղ կրոնական հավատալիքները դեռևս ամուր են նստած գյուղացիների գլխում և այլն, և այլն:

Ի հարկե, վոչ մի խելքը գլխին մարդ չի կարող ժխտել վոր այդ շրջանները ևս պետք և կոլեկտիվացման լենթարկել գյուղացիներին տնտեսական ստրկությունից և խավարից դուրս բերելու համար։ Այստեղ խնդիրը կալանում և ժամանակի, կոլեկտիվացման

աստիճանի, համատարած կոլեկտիվացման անցնելու միջանկյալ շրջանների (վարկային կոողերացիա, հողոգտագործական, մեքենապտազործական ընկերությունների կազմակերպում և այլն) մասին, կոլեկտիվացման տեմպի արագության մասին: Միանգամայն հասկանալի լե, վոր այդ շրջաններում մենք պետք են սկսենք վոչ թե համատարածից, այլ գլուղկոոպերացիայից, արտադրական ընկերությունից՝ կազմակերպելով նաև 1-2 որինակելի կոլեկտիվ տնտեսություն, խորհրդային տնտեսություն և որինակի փորձի հիման վրա աստիճանաբար առաջ շարժվենք դեպի համատարած կոլեկտիվացումը: Կոլեկտիվացումը չի կարելի դեկրետով իրագործել, այն պետք է իրագործել չքավոր ու միջակ գլուղացիների համոզված մասնակցությամբ:

Ահա այս շրջանների և գլուղերի առանձնահատուկ պայմանները հաշվի առնելու հանգամանքը, լեռնինիզմի սկզբունքը—մոռացվեց մեզ մոտ և ՍԽՀՄ-ի մի շարք շրջաններում և այս հանգամանքը կարևորագույն պատճառներից մեկը հանդիսացավ, վորպեսզի դեկրետով, վերևից լեկած հրահանգով կազմակերպված կոլեկտիվ տնտեսությունները իսկուն ևեթ քայլավելին:

«Միալ կլիներ,—ասում ե, լինինը,—լեթե ընկերուներն ուղղակի շարլոնով արտադրելին դեկրետները Ռուսաստանի բոլոր վայրերի համար... կենտրոնական Ռուսաստանը, Ռւկրաինան, Սիբիրը շարլոնացնել, լենթարկել մի վորոշ շարլոնի՝ կլիներ մեծագույն հիմարությունը»:

1921 թ. Անդրկովկասի կոմմունիստներին գրած

նամակում՝ Անդրնը պարտավորեցնում և Անդրիովիասի կոմմունիստներին, վորագիսղի Նրանք Շնականան իրենց հանրապետությունների ինքնորինակությունը, տարրերությունը խորհրդալին մուսաստանից, վորանիրաժեշտ և չպատճենել (չընդորինակել) մուսաստանի տակամիկան, այլ խելացի կերպով փոփոխել այն, հարմարացնելով իրենց զարգացման ու կոնկրետ պահանջներին»:

Պարզ է, վոր Անդրնի այս ցուցմունքը խախտվեց մեզ մոտ և Խորհրդալին Միության մի շաբաթ շրջանակում:

Եերօրդ սխալը.—Եվս սխալը վերաբերում է կուլիկտիվացման մի աստիճանից մյուս աստիճանին անցնելու լենինական սկզբունքի խախտմանը։ Հայտնի էն, վոր գլուխի կողեկտիվացումը գնում և հիմնականում յերեք աստիճանով—պարզ արտադրական ընկերություններ, վորտեղ գլուխացիների հողը կողեկտիվ ուժեքով են մշակում, միացնելով արտադրական միջոցները (գլուխառնութեական գործիքներ, աշխատող անասուններ) միայն գաշտալին աշխատանքների ժամանակ, արտել, վորտեղ գլուխացիները բացի կթի մանը անասուններից, թոշուններից, բանջարանոցից, միացնում են արտադրական հիմնական միջոցները և կրնմունա, վորտեղ բացի անձնական կարիքները բավարարող միջոցներից, միացնում են և արտադրական բոլոր միջոցները, մանը անասունները, թոշունները, բանջարանոցները, բնակելի տարածությունները, կազմակերպում են բնդհանուր ճաշաբան, փուռ, լիացքատուն և այլն։

Համեմակուսի կենտրոնական կոմիտեն այս տարի հունվարի 6-ին աբձանազբեց, վոր մեր ներկա շրջանի

կոլանտեսական շարժման նիմնական ձեվը հանդիսանում է գյուղատնտեսական արտելը, Այդ նշանակում է, վոր ներկայումս մենք պետք են նպատակ դնենք կազմակերպելու վոչ թե կոմմունան, այլ աբունելը, վորի ամբացմամբ միայն հնարավոր են նետագալում անցնել կոմմունալին: Սակայն իրականում Խորհրդավին Միութիւն մի շարք շրջաններում հաշվի չառնվեց կենտկոմի արև ցուցմունքը և այդ տեղերում սկսեցին անմիջապես առաջ վազել կոլտնտշարժման պարզ ձեփ վրայով դեպի կոմմունա, մի անգամից կոլեկտիվացման լենթարկելով բոլոր մանր ու խոշոր անասունները, թռչունները, պարտեզները, վորոշ տեղերում մինչև անգամ տան կահկաբախիքը: Այսպիսով, կոլեկտիվի կյանքին միանգամայն անծանոթ և նբանից գաղափար չունեցող չքավոր ու միջակ գլուղացին պետք է կոլեկտիվացման լենթարկեր, այն ել միանգամից, իր միակ կովը, մի քանի վոչխարը, թռչունները և այլն:

Պարզ է միանգամայն, վոր արև ձեռվ կազմակերպված ավելի շուտ դեկրետով ցուցակագրված կոլեկտիվ տնտեսությունները պետք է խսկուն և թքարակվելին, և այդպիս ել լեզավ: Այս սխալ քաղաքականությունն ունեցավ այն հետեւանքը, վոր գլուղացիները սկսեցին մասսալորեն վոչնշացնել, մոքթել իրենց անասունները, վորից և վորոշ չափով առաջացան անասնապահական և մսի դժվարությունները ներկալում: Սրա հետ միասին մենք կորցրինք կոլեկտիվացման պարզ ձևերի մեր ամբողջ ցանցը (արտադրական ընկերությունները): Այդ սխալ քաղաքականության պատճառով, վորոշ ժամանակաշրջանում առևտուբը կանգ առավ մի քանի շրջաններում և առաջ բերեց

չքավոր ու միջակ գլուղացիների դժգոհությունը ընդունվել խորհրդացին իշխանությանը

Չորրորդ սխալը կալանում և բատրակների և չքավորների մեջ ուղղվելիքը միանգամայն թուլ աշխատանքների և առնասաբարակ գլուղական մեր կազմակերպություններին (կուսրջիջ), գլուղխորհուրդ, կոմսոմոլ, զեղջունիները, պատգամավորական խմբակ և այլն) չնախապարատելու մեջ, Ամիսավեց լենինիդի հիմնական սկզբունքներից մեկը գլուղում, այն եւ ամուր հենավել միայն չքավորության վրա, համաձայնություն կալացնել միջակի հետ, կուլակի գեմ անխնա պալքար մղելու համար հենց այն շրջանում, իբր մեզ անհրաժեշտ եր վճռական հարված հասցնել կուլակին և վերացնել նրան վորպես դասակաբդ համատարած կուտանսեսական բազալի վրա (ինչ կասկած, վոր մենք ունեցինք Հայաստանում այնպիսի շրջաններ, վորտեղ կարելի իբր համատարած կոլեկտիվացման և կուլակության վոչնչացման քաղաքականությունը կիրառել հենց այս դարնանացանին): Հենց այդ շրջանում ավելի քանի ժբրեկը, առաջնակարգ դեր պետք և խաղաղ խորհրդակին իշխանության հաստատուն հենարանը՝ բատրակներն ու չքավորները: Սակայն Հայաստանի կուսակցական կազմակերպություններից և վոչ մեկը չկարողացավ անհրաժեշտ չափով կազմակերպել չքավորներին, ամբացնել վերջինի դաշինքը միջակ գլուղացիության հետ և նախապարագատել նրան կուլակի գեմ վճռական պալքար մղելու համար: Ընդհակառակը, միանգամայն աչքաթող արվեց չքավորության կազմակերպման խնդիրը և կուլակների դեմ մղվելիք պալքարը գնաց առանց չքավորների կազմակերպված մաս-

նակցութիւն, տարերապին կերպով, առանց չքավոր-ների և միջակների ամուր դաշինքի: Սրան պետք է ավելացնել կուսակցութիւն ոժանդակ կազմակերպութիւնների (գյուղխորհուրդ, կոմսոմոլ, պատգամավորական ժողով և այլն) միանդամայն թուլլ նախապատրաստումն ու անբավարար աշխատանքը: Դադար չե, վոր մեր գյուղխորհուրդներից շատերն անպետք դուրս լեկան կոլտնտշինաբարութիւնն համար մղվող պալքարում, նբանք չզվավորեցին կուլակի զեմ մղվելիք պալքարը կոլտնտշարժումը և այլն:



Ահա այն հիմնական սխալները, վորոնք տեղի ունեցան այս տարի գարնան գյուղանտեսական կամպանիալին Հայաստանում և ՍԽՀՄ-ի մի շաբք ուալոններում: Սրանց պետք է ավելացնել մի շաբք լերկրորդական կարգի սխալներ, ինչպիսին են անհատական տնտեսութիւնները մոռացութիւն տալը, մեր սպառողական կոռպերացիալի սխալ՝ քաղաքականութիւնը դեպի անհատական տնտեսութիւնները մի շաբք վայրերում—լեկեղեցիների փակումը, կոպիտ, անթուլատրելի, և վարչական մտեցում դեպի անհատ միջակ ու չքավոր գյուղացիները, վորոնք նուևնպես բացասական պայմաններ ստեղծեցին գյուղում:

Հարց եւ առաջ դալիս, ի՞նչպես կարող եր նման կոպիտ սխալներ տեղի ունենալ գյուղում: Ի՞նչպիս կարող ելին մեր կուսակցութիւն վորոշ կազմակերպութիւններն ու աշխատողները խախտել լինինիզմի վերոհիշյալ սկզբունքները:

Այդ սխալներն առաջ լեկան վոչ թե կուսակցական ալդ կազմակերպությունների և ընկերների ղետի միջակ գլուղացիություն ունեցած թշնամական վերաբերմունքի կամ լենինիզմից միանգամայն վոչինչ չհասկանալու պատճառով, ալլ դրանք առաջ լեկան կոլեկտիվ տնօտեալության շինարարության ասպարիզում ձեռք բերած արագ հաջողությունների հետևանքով։ Այդ հաջողությունները չափից շատ վոզեռեցին վորոշ կազմակերպությունների, նրանք սկսեցին առաջ սլանալ, առանց թիկունքն ու շուրջը նալելու, նրանք մի շնչով սկսեցին առաջ վագել՝ աչքաթող անելով ամեն ինչ։

Այդ հաջողությունները, ինչպես ընկեր Ստալինն և առում, զլխապտույտ առաջ բերին վորոշ աշխատողների զլխում, պարծենկոտություն, չափից զուրս ինքնավստահություն և ինքնահավանություն, իր ուժերը գերազնահատելու, իսկ հակառակորդի ուժերը թերագնահատելու արամադրություն ոչ կատարելով միանգամայն հնարավոր եր հավատ դեպի դեկրետի, բանաձեկի և կարգադրության ամենակարող ուժը։ Այստեղ միանգամայն ռեալ վտանգ կար, վոր կուսակցական ձեռնարկումները վերածվեցին շինովնիկական դատարկ գերեսավորման...), — առում և ընկ. Ստալինը։ Կոլտընական հաջողություններն առաջ բերին մեծամտության վողի՝ «Մենք ամեն ինչ կտրող ենք՝ անել», «մեզ համար զբանք դատարկ բան են», «ամեն ինչ հեշտ և մեզ համար»։ Այս կարգի արամագրություններ առաջ լեկան մի շարք աշխատողների շրջանում։ Կտրվել մասսաներից, առաջ վագել առանց մասսաների։ Սրանք են հիմնականում թույլ աված սխալների պատճառները։

Թուլլ տված այս սխալները շարունակվեցին մինչ  
չե մարտ ամսի վերջերը։ Խնդիրը կայանում ե նրա-  
նում, վոր այդ սխալները ժամանակին չընդունվեցին  
և չուղղվեցին կուսակցական կազմակերպությունների  
կողմից։ Հարկավոր լեզավ Համկոմկուսի կենտրոնի վըճ-  
ռական և կտրուկ միջամտությունը, վորպեսզի տեղա-  
կան կուսկագմակերպությունները սթափվեյին դլուխը  
լաց թողած վազքից, ուշքի գալին հաջողություններից  
հարբելուց ու գլխապտուկտից և սկսելին ուղղել թուլլ  
տված սխալները, վոր մեզանում փաստորեն սկսվեց  
ապրիլի սկզբներէց։

Իսկ այդ շրջանում գլուղի կուլակը, տերտերը,  
դաշնակը և առհասարակ հակախորհրդակին տարերը,  
վորոնց դեմ եր ուղղված կոլտնտեսական շաբժումը,  
վորոնք գազազել ելին, չափազանց վարպետորեն ոգ-  
տագործեցին թուլլ տված բոլոր սխալները։ Մեր սխալ-  
ներն ուժ ընդունելու պատճառով, նրանք ժամանակ  
շահեցին, կարողացան իրենց կողմը գրավել մեր սխալ  
քաղաքականության հետևանքով կորոնտեսությունից  
դժգոհ մնացած միջակների վորոշ մասին, սկսեցին սան-  
ձարձակ պրովակացիա մղել ընդդեմ կոլտնտշաբժմանը,  
ընդդեմ խորհրդակին իշխանությանը, ոգտագործել կա-  
նանց հետամնացությունը և նրանց լելութի դուքս բե-  
րել ընդդեմ կոլտեկտիվ շաբժման՝ մի քանի շրջանում։  
Սակայն միայն սրանով չրավականացան կուլակ-դաշ-  
նակ տարբերը։ Նրանք սկսեցին մի շաբք հեռավոր և  
հետամնաց վայրերում ձեռք բարձրացնել խորհրդակին  
իշխանության ներկայացուցիչների վրա, տերը որի ին-  
թարկել մեր աշխատողներից մի քանիսին և զինված  
լելութներ կազմակերպել այս կամ այն շրջանում կամ

դլուղում՝ ընդդեմ խորհրդալին իշխանութիւն, պրովո-  
կացիայի միջոցով իրենց հետեիցը տանելով հետամնաց  
զլուղացիների աննշան շերտերը, խարելով վերջիննե-  
րիս խորհրդալին իշխանութիւն տապալման, անգլիացի-  
ների գալու, դաշնակների տիրապետութիւն հաստատ-  
ման և այլ կարգի անհիմն ու ստոք պրովոկացիանե-  
րով:

Մեր կուսակցութիւնը վիճակված եր մի կողմից  
ամրող ֆրոնտով լայն պալքաց մղել կատարված սխալ-  
ներն ուղղելու համար, վորոնք ըստ եյության հան-  
գիսանում ելին տրոցկիստական տեսակետների կըրկ-  
նութիւնն պըակտիկալում, մրուս կողմից՝ անխնա պալ-  
քար մղել գաղապած կույտակների գեմ, մերկացնել նրանց  
պրովոկացիաները և պալմաններ ստեղծել, վորպեսզի  
խաղաղ աշխատանքի անցնեն կուլակների կողմից վախի  
և նթարկված միջակ ու չքավոր զլուղացիների այդ ան-  
նշան խավերը:

Սակայն, անհրաժեշտ և շեշտել վոր սխալների  
վերացման գործը սկզբնական շրջանում շատ դանդաղ  
տեմպով եր առաջ գնում: Գյուղում աշխատող մեր ըն-  
կերներից շատերը քաջութիւնն չունեցան սկզբնական  
շրջանում սփաշքարա չքավոր ու միջակ զլուղացիների  
ներկայությամբ հայտարարելու իրենց կատարած սխալ-  
ների մասին և վճռականորեն ուղղելու այն: Նրանցից  
շատերը սկսեցին արդարացնել իրենց, մեղքը զցել վե-  
րեից յեկած հբանագների վրա և խուսափել առհա-  
սարակ սեփական սխալներն ընդունելուց: Կուսակցու-  
թիւնը սփափված յեղագ ավելի կտրուկ միջոցներ ձեռք  
առնել նմանների նկատմամբ, հեռացնել նրանցից մի  
քանիսին աշխատանքից, վերցնել զլուղից՝ զլուղ ու-

ղարկելով նոր, թարմ և ավելի պատրաստված ընկերների, Այդ անհրաժեշտ եր քանի վոր գյուղում ստեղծված լարված դրությունը, սխալների հետևանքով առաջացած անկալուն դրությունը սպառնում եր բանվորների և գյուղացիների գաշինքի խզմանը, սպառնում եր խորհրդավին իշխանությանը մի շարք շրջաններում։ Յեվ շնորհիվ կուսակցության ձեռք առած արդ վճռական միջոցների, կայունացավ վատանգված շրջանների քաղաքական դրությունը։ Թեև պետք և ընդգծել, վոր գեռես կան գյուղեր, ուր սխալների ուղղումը մինչև վերջը չի կատարվել և այդ աշխատանքը հանդիսանում և մեր առաջնակարգ խնդիրը ներկայումս։

Մեր սխալների ուղղման և բացարական լայն աշխատանքի ծավալման շնորհիվ, հնարավոր լեզակ մեկուսացնել կուլակալին դաշնակցական տարրերին, ուակայն նրանք չդադարեցրին պալքարը կլոնակության և խորհրդավին իշխանության դեմ։ Հեռանալով գյուղից և ապաստան գտնելով լեռներում և անտառներում, նբանք սկսեցին պարբերաբար բանդիտավին հարձակումներ գործել առանձին գյուղերի, կողմնկտիվ և խորհրդավին տնտեսությունների վրա և աշխատել տերբորի տակ պահել մի քանի գյուղ, խանդարել չքաշվոր ու միջակ գյուղացիների խաղաղ շինարարական աշխատանքը։ Այստեղ խորհրդավին իշխանությունը ձեռք առաջ ամենակարուկ միջոցներ՝ այդ կուլակդաշնակցական բանդիտավին շաբժումը ջախջախելու, չքաշվոր ու միջակ գյուղացիների խաղաղ աշխատանքը ապահովելու համար։

\* \* \*

Թուլլ տված սխալները փորձեցին ողտակործել  
նաև աջ ոսպորտունիստները։ Աջերը, վորոնք մա-  
րտ ելին մտել կոլտնտեսությունների հաշողու-  
թյունների շրջանում, սպասելով հարմար ժամանակա-  
շրբջանի, կուսակցության վրա հարձակում դորձելու  
ամար, ովտվելով սխալներից սկսեցին աշխուժանակ  
փոտքի կանգնել և հարձակում դորձել կուսակցության  
զիստավոր գծի վրա, արդարացնելով իրենց տեսակետ-  
ները, կատկածի տակ առնելով կուսակցության հիմ-  
նական քաղաքականությունը գլուղի կոլեկտիվաց-  
ման և կուլտակին վորպես գասակարդ լիկվիդացիալի-  
թենթարկելու մասին Աջերը սկսեցին խօսել այն մա-  
սին, թե կատարված սխալների պատճառը վոչ թե  
հանդիսացել են անզական կուսակցական կազմակեր-  
պությունները, այլ համամիութենական կենտրոնա-  
կան եռմիտն, վորը սխալ և անժամանակ դիրեկտիվ-  
ներ ել ավել անզերին և, վոր զիստավորն և, չի զգու-  
շացրել կուսկազմակերպություններին՝ կատարվելիք  
հնարավոր սխալների մասին և այնու Կաբէիք չկա ալ-  
ահեղ մեկ առ մեկ մատնանշել Համկոմկուսի Կենտկոմի  
իր ժամանակին տված ցուցմունքների ամասին, քանի  
վոր այն հալունի լև բոլորին։ Մենք արդեն զբարձրէինք  
սկզբի մասում ծանոթացանք 15-րդ համագումարի և  
ընկեր Լենինի ցուցմունքների հետ, վորտեղ պարզո-  
րոշ զրված և կոլեկտիվացման խնդիրների, նրա կա-  
մավոր սկզբունքների և հնարավոր սխալներից զգու-  
շացնելու մասին։ Հիշենք միայն, վոր ալու խնդիրն  
ավելի ուրեմնակերպում ստացավ 16-րդ կուսկոնքի-

բանսում և ապա, այնուհետեւ Կենտրոնական Կոմիտեից՝  
 1930 թվի հունվարի 6.ին, կոլտնտշինաբարության մա-  
 սին ընդունած բանաձեռնում, վորտեղ մինչև անգամ մատ-  
 նանշվեց, թե Խորհրդավիճ Միության վեր շրջանները  
 յերբ յիշ ինչ ծառանակ պետք է կոլեկտիվացման յին-  
 թարկվեն. Այդ վորոշման համաձայն, Հյուսիսային Կոլ-  
 կասը, Միջին և Ներքին Վոլգաները կարող ելին կոլ-  
 լեկտիվացումը հիմնականում ավարտել 1931 թ. գար-  
 նանը, հացանատիկալին մյուս մարզերը (Ուկրաինան,  
 Կենտրոնական Սփյանող մարզ, Սիրիք, Ռւբալ Ղա-  
 ղախստան և այլն) կարող են ավարտել հիմնականում  
 1932 թվի գարնանը, իսկ մնացած մարզերը կարող են  
 յերկարածզել կոլեկտիվացումը մինչև 5-ամյակի  
 վերջը, այսինքն՝ 1933 թիվը. Այսպիսով, Անդրկով-  
 կասի, Հայաստանի և առհասարակ մնացած ամբողջ  
 շրջանների տրամադրության տակ կար դեռևս 3 տարի  
 մինչև կոլեկտիվացման ավարտումը: Այսինչ տեղական  
 կազմակերպությունները հաշվի շառան Համկոմկուսի  
 այս վորոշումը և գործեցին ուղղակի նրան հակառակ:  
 Միանգամայն պարզ է, վոր աջ ոպպորտունիստները  
 զբարտում են կուսակցությանը՝ և ոժանդակում կու-  
 լակներին՝ կուսակցության վրա հարձակվելու համար:

Կուսակցությունը ստիպված եր վճռական կրիկ  
 մզելաջ ոպպորտունիզմի դեմ, վորպես ներկա շրջանի  
 զլիսավոր վտանգի: Աջ ոպպորտունիստները հանդիսա-  
 նում են կուլակների ազենտները մեր կուսակցության  
 մեջ, նրանք արտահայտում են և պաշտպանում են կու-  
 լակների տեսակետները, նրանք ուղում են հետ դարձ-  
 նել կուսակցությանը հարձակման դիրքերից դեպի նա-  
 հանջի ճանապարհը, հրապարակ բաց անելով կուլակ-

ների համար, այն ել աշնպիսի պալմաններում, լեռք  
մենք վճռական և վերջնական պալքար ենք սկսել կու-  
լակների դեմ: Ահա սրա համար ել աջ թեքումը հան-  
գիսանում և զլխափոր վտանգը ներկալումս: Սակայն,  
վորպեսզի կարողանանք ալդ վտանգի դեմ հաջողու-  
թլամբ պալքարել՝ մենք պետք և նախ և առաջ պալ-  
քարենք կորոնտշինաբարութլան ասպարիզում կատար-  
ված «ձախ» սխալների դեմ, վորովհետեւ նրանք պալ-  
մաններ և պաքարտ հող են ստեղծում աջերի գործու-  
նելութլան համար: Զե՞ վոր թույլ տված ալդ սխալ-  
ների հիման վրա աջերը սկսեցին ակտիվանալ և տեղ-  
տեղ փորձ արեցին իրենք ուղղել թույլ տված «ձախ»  
սխալները աջ քաղաքականութլամբ: Ուրեմն կուսակ-  
ցութլունը պետք և պալքար մզի լերկու ֆրոնտի վրա,  
թե աջ ոպպորտունիզմի դեմ, վորը հանդիսանում և  
ներկա շրջանի զլխափոր վտանգը, և թե «ձախ» շե-  
զումների դեմ, վորը սնունդ և տալիս աջ ոպպորտու-  
նիզմին: Այս և միակ, ուղիղ, և լենինյան քաղաքակա-  
նութլունը:

\* \* \*

Մենք վերջացրինք գարնանացանի աբոյունք-  
ները, մեր առաջ պարուիցին այն նվաճումներն ու  
թերութլունները, վոր ունեցել ենք գալնանացանի  
ընթացքում: Մեզ մոտ և այլ ուայններում թույլ տված  
սխալները լերբեկցի չեն նսեմացնում կամ փոքրաց-  
նում այն հսկակական և վիթխարի աշխատանքն ու  
նվաճումները, վոր ունեցել և բանվոր դասակարգը և  
չքավոր ու միջակ զլուղացիութլուն ալս զարնանա-  
ցանին՝ կոմկուսի դեկավարութլամբ: Մենք անցյալ

տարվա աշնանացանի և առանձնապես այս տարվա գարնացանի դլուղատնտեսական կամպանիայի ընթացքում կարողացանք մոտ 6 միլիոն անհատական գլուղացիական տնտեսություններ ընդգրկել կազմակերպված 82,000 կոլեկտիվ տնտեսություններում:

Մենք կարողացանք այդ 6 միլիոն անհատական տնտեսությունների անցյալ տարվա 24 միլիոն հեկտար ցանքսատարածությունը բարձրացնել 36 միլիոն հեկտարի, այսպիսակ ավելացնելով ցանքսաղաշտերի տարածությունը 45 տոկոսով մենք հիմք դրինք կուլտիվ այնպիսի տնտեսությունների վորոնցից ամեն մեկը միջին հաշվով ընդգրկում է 1000 հեկտար հողավիճ տարածություն. այնինչ ամերիկյան հարուստ ֆերմերն աշխատում է 100—200 հեկտար տարածություն ունեցող հողի վրա: Մենք մի տարվա ընթացքում ավելացրինք կուտնատեսությունների ցանքսաղաշտերի տարածությունը 11 միլիոն հեկտարով, այնինչ Ամերիկայում, վորը հանդիսանում է և դյուզատնտեսական տեսակետից զարդացած լեռներից մեկը 10 տարվա ընթացքում ավելացրել է իր ցանքսաղաշտերի տարածությունը միայն 4 միլիոն յեկտարով: Մեր ամեն մի տրակտորը 1928 թվին աշխատել է տարեկան 1400 ժամ, այս տարի ամրող տարվա ընթացքում աշխատելու է 2500 ժամ, այն ինչ Ամերիկայում նա աշխատում է տարեկան 400—600 ժամ: Մենք հիմք ենք դրել սոցիալիստական նոր տնտեսությանը գլուղում, մենք կոլեկտիվ աշխատանքի յենք լծել միլիոնավոր չքավոր ու միջակ գլուղացիների նոր հասարակարգի համար. մենք կոլեկտիվ և խորհրդային տնտեսությունների կազմակերպման պլանը կատարել

և գերակատարել ենք Զ տարում. Սա աշխարհիս լերեսին մինչև ալժմս և վոչ մի լերկրում չտեսնված լերեռութե և՛ Մենք ձեռնարկել ենք վերացնել կուլակութլունը վորպես գասակարգ՝ պատմական լոգունդի կիրառմանը:

Ահա սրանք են մեր նվաճումները: Այս բոլորը, միլիոնների այս շարժումը չի կարող տեղի ունենալ առանց դժվարությունների և առանց գասակարգավիճն վճռական ճակատամարտերի: Միայն չինովնիկներն ու աջ սովորայունիսանները կարող են «սոցիալիզմ» կառուցել առանց գասակարգավիճն պայքարելի, անսայթաք ու անխոռվ սոցիալիզմին հանենք սպիտակ ձեռնացները հաղին, կարինեաններում նստած, իսկ իսկական լենինիսանները բանվոր գասակարգի հետ միասին, ջրավոր ու միջակ գյուղացիների հետ միասին, առանց դժվարությունների առաջ ծունկ չոգելու կշարունակեն սկսած մեծ գործը մինչև վերջնական հաղթանակը:

Այս բոլորով մենք չենք ուզում թեկուղ ամենափար չափով անզամ աչքաթող անել կամ զանց առնել դարնանացանի ընթացքում կատարված չափականց լուրջ սխալները: Բնդիակառակը մենք նույն լենինիան հաստատությամբ պետք և լծվենք այդ սխալները մինչև վերջը, առանց հետք անզամ թողնելու վերացնելու, գործին վորպեսզի անհնար լինի նրանց կրկնությունը մեր առաջընթացի հետագա գործեն շրջանում: Այդ մենք կանենք: Այդ կապացուցի հերթական աշնանացանը, վորի առաջ մենք կանգնած ենք:









# ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՊԵԿՆԵՐԸ

Ըշ	Տող	Զպգած և	Թերթ և լինի
8	5	նոր բաղաբակա- նության	քաղաքականության նոր,
11	19	դութանացան	գարնանացան
13	29	տնտեսությունների ծրագիրը	տնտեսությունների ցանքսազաշերի ըն- դանձակման ծրագիրը
14	30	տալու լին 256 միլիոն	տալու լին 284,2 միլիոն
15	6	250,000	256,000,000
15	7	83,000	82,000,000
15	25	180,6	218
16	2	182,8 տոկոս	182,8 տոկոս (23 թվի համեմատությամբ) ընդ- հանուր...
25	25	գասակարգ	գասակարգի
26	24	միջակի	միջակի
27	8	միջակի	միջակ
32	25	արտադրելին	արտադրելին
33	17	դյուզացիների	դյուզացիները
35	19	գարնանացան- նին), Հենց	գարնանացանին), հենց
37	21	վերածվեցին	վերածմենին
41	4	ժամանակաշրջանի ժա-	զԱՅ Հիմնարար Գիտ. Գրադ.
45	24	վերացնելու, դործին	վեր



FL0040341

(104) 800-  
ԳԻՒԾ 26 ԿՈՊԵԿ (1½ մամուլ) A 4742



Օ. ՕՎԱՆԻՍՅԱՆ

**Что дал большевистский весенний посев?**

Госиздат ССР Армении  
Эривань—1930